



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

Lkn

---

192

(2) 1999



dtin
192

43847-Ա.Բ.

48

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ



## ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՒՅԵԱՅ


ԽՆԱՄԵՏՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

հես



ՎԱԳՐՈՒՇՈՊՈՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱՐ Է.ՋՄԻԱԾՆԻ



Հ. 198

9

28227-62

7192-607

ՀԲՄՐԵՆԱԻ

ՏԵՍԱԻՆ ՏԵՍԱԻՆ ՄԱՊԱՐԱՅ

ՎԵՀՍՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՒՂՈՍԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՒՂԵԱՅ ԽՆԱՄԱՆԱՐ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

1. Ընկերութեան նպատակն է օգնել իգական սեռի կրթութեան գործին Աստրախանում:

2. Նպատակին համեմու համար իր կարողութեան չափով՝

ա) նպաստում է դրամով քաղաքիս օրիորդաց Հոգևոր դպրոցին.

բ) նիւթապէս օգնում է նոյն դպրոցի չքաւոր աշակերտուհիներին.

գ) Հոգում է կար ու ձևի և ձեռագործի կատարելագործութեան մասին օրիորդաց դըպրոցում.

դ) Օգնում է այն անձերին, որոնք կկամենան պատրաստուիլ հայոց օրիորդական Հոգևոր դպրոցում ուսուցչի պաշտօն կատարել և

է) Բացում է առանձին դասատուն տնտե-

սականութիւն սովորեցնելու նպատակով դըպ-  
րոցին կից կամ առանձին:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԸՋՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

3. Ընկերութիւնը կազմում են Հիմնադիր,  
մշտնջենաւոր, պատուաւոր և տարեկան ան-  
դամները, որոնց թիւը սահմանափակուած չէ:

4. Ընկերութեան միջոցները սրանք են.

ա) Հիմնադիր և մշտնջենաւոր անդամների  
միանուագ նուէրները և տարեկան անդամների  
վճարները.

բ) Միանուագ նուէրներ դրամով, իրեղէննե-  
րով և ամենատեսակ ստացուածով.

գ) Գումարներ, որ գոյանում են ընկերու-  
թեան օգտին տրուած ներկայացումներից, պա-  
րահանդէսներից, հրապարակական դասախօ-  
սութիւններից և այլ օրէնքով թոյլ տուած հան-  
դէսներից:

5. Ընկերութեան գումարները պահպան-  
ւում են արքունի կամ Աստրախանի քաղա-  
քական հասարակական գրամանոցում ընկե-  
րութեան անունով: Այս գումարները կարող  
են յետ ստացուիլ միայն ընկերութեան կար-



դադրութեամբ և այն՝ ըստ նախնիների թողութեան  
գումարների վիճակաւոր Առաջնորդի կողմից  
թացիկ ծախսերի համար խորհրդի որոշած գու-  
մարը ժնում է գանձապահի մօտ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՆՐԱՆՑ  
ԻՐԱՒՈՒՆՔԸ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

6. Հիմնադիր անդամները թէ իգական և  
թէ արական սեռի նրանք են՝ որոնք ընծայում  
են ընկերութեան կազմակերպութեան համար  
մի նշանաւոր գումար, միանուագ, ոչ պակաս  
քան հինգ հարիւր ըուբլի:

7. Մշտնջենաւոր անդամները որոնք կնուի-  
րեն ընկերութեանը միանուագ, ոչ պակաս  
քան մի հարիւր ըուբլի:

8. Պատուաւոր անդամները կոչուում են  
նրանք, որոնք իրանց հասարակական դրու-  
թեամբ ընկերութեանը մի նշանաւոր օգուտ  
տուած կլինին:

9. Տարեկան անդամները վճարում են  
հինգ ըուբլի:

10. Հիմնադիր և մշտնջենաւոր անդամնե-  
րի տուրքերը, նոյնպէս և բոլոր մնացեալ մուտ-  
քի տասն տոկոսը պահպանուում են ընկերու-

Թեան անուամբ արքունի կամ Աստրախանի քաղաքական հասարակական դրամանոցում անձեռնմխելի, մինչև ընկերութեան առանձին կարգադրութիւնը՝ թոյլտուութեամբ վիճակաւոր Առաջնորդի:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.

11. Ընկերութեան գործերը կառավարում է ընդհանուր ժողովից՝ երեք տարի ժամանակով ընտրուած, եօթն անձերից բաղկացած խորհուրդը: Խորհուրդը իր անդամների միջից ընտրում է նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և գործավար: Խորհրդի անդամները ունին չորս անձնափոխանորդներ:

12. Խորհրդի անդամներին և նրանց անձնափոխանորդներին հաստատում է վիճակաւոր Առաջնորդը:

13. Խորհրդի անդամները և նրանց անձնափոխանորդները ընտրուում են բացառապէս կանանց միջից:

14. Խորհրդի անգամայ բացակայութեան ժամանակ, նրա տեղը հրաւիրուում է առաւել քուէ ստացող փոխանորդը:

15. Խորհուրդը հրաւիրում է նախագահը հարկաւոր ժամանակին՝ առանձին կոչնագրով. բացի սրանից ամեն ամիս լինում է խորհրդի ժողով: Խորհրդի վճիռները գրուում են առանձին մատենի մէջ. այս վճիռները ստորագրում են ժողովին ներկայ անդամները:

16. Խորհրդի հարցերը վճռուում են ձայների առաւելութեամբ. ձայների հաւասար դէպքում, նախագահի կամ նրա փոխանորդի ձայնը առաւելութիւն է տալիս: Խորհրդի ժողովը կայանում է, եթէ ներկայ են՝ նախագահը, կամ նրա փոխանորդը և երեք անդամներ:

17. Խորհուրդը պարտաւոր է.

ա, Աշխատել ընկերութեան անդամների թիւը աւելացնել և աճեցնել դրամական միջոցները:

բ, Հսկել ընկերութեան հաշուով պահպանուող տնտեսականութեան դասարանի բարելաւութեանը և կանոնաւոր ընթացքին.

գ, Օգնել նիւթականապէս տեղւոյս օրիորդական դպրոցի չքաւոր աշակերտուհիներին.

դ, Նուիրել ջանք ու ժամանակ նոյն դրպրոցում աւանդելի ձեռագործութեան և կար

ու ձևի կանոնաւոր ընթացքին, աշխատելով  
յաճախել այն առարկաների դասերին. \*)

է, Իւրաքանչիւր ամիս ստուգել ընկերութեան  
պատկանեալ գումարները և

դ, Իւրաքանչիւր տարուայ վերջում պատ-  
րաստել և առաջարկել ընդհանուր ժողովի  
հաստատութեանը ընկերութեան տարեկան  
հաշիւը և ապագայ տարուայ նախահաշիւը:

18. Խորհուրդը ունի իրաւունք.

ա, Ընդունել և հաստատել տարեկան ան-  
դամներին.

բ, Կազմել ներկայացումներ, պարահանդէս-  
ներ, գրականական երեկոներ, նուագահանդէս-  
ներ և այլն, խնդրելով հարկաւոր դէպքում,  
իշխանութեան օրինական թոյլտուութիւնը:

19. Խորհրդի նախագահը կամ նրա փո-  
խանորդը պարտաւոր է.

---

Ծանօթութիւն. Գ. կէտում յիշած առարկաների  
դաստատութեան մէջ թերութիւններ նկատած ժա-  
մանակը խորհրդի անդամները՝ խորհրդի միջոցով  
պէտք է յայտնեն այս մասին Հոգեւոր օրիորդական  
դպրոցի վարչութեանը, չմիջամտելով դպրոցի վար-  
չութեան գործերի մէջ:

ա, Հսկել, որ ճշտութեամբ կատարուին այս  
կանոնադրութեան յօդուածները, ընդհանուր  
ժողովի և խորհրդի բոլոր վճիռները.

բ, Կատարել ընկերութեան գրաւոր և բա-  
նաւոր հաղորդակցութիւնները:

20. Գանձապահը պահում է ընկերութեան  
դրամական և այլ նուէրների հաշիւները, որոնց  
համար ստանում է երկու ժապաւինեալ մա-  
տեան վիճակաւոր Առաջնորդից: Նա ընդու-  
նում է դրամական տուրքերը և նուէրները,  
արձանագրում է պատշաճեալ մատեանների  
մէջ, տալիս է անդորրագրեր նախագահի և  
իւր ստորագրութեամբ, և անում է ընթացիկ  
ծախսերը խորհրդի որոշմամբ: \*)

21. Գործավարը արձանագրում է ընդհա-  
նուր ժողովի և խորհրդի վճիռները առանձին  
մատեանի մէջ և կատարում է բոլոր գրա-  
գրութիւնները: Նրա ձեռքն է դիւանն, գործերը  
և ընկերութեան կնիքը: Նա կարող է ունենալ  
խորհրդի որոշմամբ, վարձաւոր գրագիր:

---

Ծանօթութիւն. Գրամական մատեանը խորհրդի նիս-  
տերի օրերը պէտք է բաց լինի ընկերութեան բո-  
լոր անդամների համար:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

22. Ընդհանուր ժողով լինում է տարեկան և անակնկալ, ուր ունին ձայն հաւասարապէս հիմնադիր, մշտնջենաւոր, պատուաւոր և տարեկան անդամները:

23. Տարեկան ժողովները լինում են Փետրվարի և Նոյեմբերի սկզբներում:

ա, Բննելու դրամական, այլ նուէրների և գործոնէութեան հաշիւները և նախահաշիւ հաստատելու:

բ, Խորհրդի անդամներ և անձնափոխանորդներ ընտրելու:

գ, Խորհրդի կամ անդամների առաջարկութիւնները լսելու և եզրակացութիւն տալու:\*)

24. Անակնկալ ժողովներ հրաւիրուում են Խորհրդի որոշման համաձայն, կամ հարկը պահանջած ժամանակ, վճուելու այնպիսի հարցեր, որոնք նախատեսած չեն կանոնադրութեանս

Ծանօթութիւն. Ընտրութիւնների և հաշիւներ առաջարկելու ժողովը լինում է Փետրվարի սկզբում. իսկ նախահաշիւը Նոյեմբերին:

մէջ և հետևաբար Խորհրդի իրաւունքից դուրս են:

25. Ընդհանուր ժողով հրաւիրողը Խորհրդի նախագահն է: Ժողովից մի քանի օր առաջ նախագահը ուղարկում է հրաւեր բոլոր անդամներին, որոնք գտնուում են Աստրախանում: Հրաւիրագրում նշանակուում են ընդհանուր ժողովին առաջարկելի հարցերը:

26. Ընդհանուր ժողովը կայանում է, եթէ ներկայ է ժողովին հրաւիրուած անդամների չորրորդ մասը. չկայացած ժողովից տասն օր յետոյ, հրաւիրուում է երկրորդ անգամ, որոյ համար այլ ևս չէ պահանջուում որոշեալ թիւ անդամների և այդ երկրորդ ժողովը վճուում է առաջին ժողովին զրուած հարցերը:

27. Ընդհանուր ժողովում ձայն ունին Խորհրդի և ընկերութեան բոլոր կատարելահասակ անդամները: Ընդհանուր ժողովը ունի իր ընտրեալ նախագահը մի տարի ժամանակով:

28. Ընկերութեան տարեկան հաշիւները կհրատարակուին ազգային լրագրներում և կամ առանձին տետրակներով: Հաշուի մի մի ձեռագիր օրինակը կներկայացուի (Արբազան Առաջնորդի միջոցաւ) Ամենայն Հայոց Ծայրագոյն

Պատրիարք Կաթողիկոսին և Վիճակաւոր Առաջնորդին և բացակայութեան դէպքում, Սինօդին Սրբոյ Էջմիածնի և Կոնստանտնուպոլսոյ Հայոց Աստրախանի:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ.

29. Ընկերութիւնը ունի իրաւունք զնել և վաճառել շարժական և անշարժ կայքեր, կապել պայմանագրութիւններ, պահպանել իր շահերը խորհրդի կամ առանձին հաւատարմատարի ձեռամբ և բանալ ու փակել տնտեսագիտական դասարաններ:

30. Ընկերութիւնը ունի իր կնիքը, փորագրած Փրկչական Ս. Խաչը և շուրջը « ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՒՆՆԵԱՅ ԽՆԱՄԱՍԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ » և ընկերութեան հիմնարկութեան տարին:

31. Եթէ որ և է պատճառով դադարի ընկերութեան գոյութիւնը, այն ժամանակ նրա բոլոր գումարները և այլ սեփականութիւնը ժառանգում է տեղւոյս ազգային Օրիորդական Հոգևոր դպրոցը կամ Աստրախանի Հայոց եկեղեցիները:

32. Աստրախանի Հայուհեաց Խնամատար

Ընկերութիւնը հաստատում է Ազգիս Վեհափառ Հայրապետը և Նրա բարեհաճութեամբ՝ Վիճակաւոր Առաջնորդի առաջարկութեան համաձայն, կարող են լինել, հարկաւոր ժամանակ, փոփոխութիւններ ներկայ կանոնադրութեան յօդուածների մէջ:

Կազմեցի՝ Վիճակաւոր Առաջնորդ Թեմին Հայոց Աստրախանի և Կովկասու՝

Գէորգ Եպիսկոպոս Սուրէնեանց:

Ի 11 Դեկտեմբերի 1890 ամի.

յԱստրախան:

Հաւան գտեալ մեր ընդ այս Կանոնադրութիւն, հաստատեմք ստորագրութեամբ մերով և դրոշմամբ Հայրապետական Կնքոյս:

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Համար 1.

Ի 1 Յունվարի 1891 ամի Փրկչական և ի մերումս թուականին ՌՅԽ.

Ի Ս. Էջմիածին.

S. 4.

8/12/54

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*



<< Ազգային գրադարան

NL0108455

